

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ, ՆՇՈՒՄՆԵՐ,
ԵՒ ՎԻՃԱՐԿՈՒՄՆԵՐ

*COMMUNICATIONS, NOTES
ET DISCUSSIONS*

ԽԵԹԱԿԱՆ ԹԵԳԱՐԱՄԱ ՔԱՂԱՔ-ԵՐԿԻՐԸ¹

Խեթական տէրութեան արեւելեան երկրամասերից մէկն էր հանդիսանում Թեգարաման: Աշխարհագրական առումով այն մասն է կազմում Հայկական լեռնաշխարհի, որով եւ նրա պատմութիւնը մեզ համար կրկնակի հետաքրքրութիւն է ներկայացնում: Նկատի ունենալով հայ ժողովրդի ազգածագման զգալի աղերսները վերինեփրատեան տարածաշրջանի հետ², մասնագէտները աւանդաբար հակուած են եղել նոյնացնելու «Տոււն Թորգուման» անդրեփրատեան տարածաշրջանում դեռ Գ.ա. Բ. հազարամեակից յիշատակուող Թեգարամա (ասորեստանեան Թիլ-Գարիմմու) քաղաքի հետ: «Տոււն Թորգուման» բառացիօրէն կրկնում է Աստուածաշնչում յիշատակուող Bet-Togarmaն³: Թեգարամա երկրի պատմութեան ուսումնասիրութիւնը կարեւոր է նաեւ այն առումով, որ հայոց մատենագրութեան մէջ, սկսած Մովսէս Խորենացուց⁴, Հայկ

- 1 Հին արեւելեան գրաւոր աղբիւրներում շատ յաճախ որոշակի շրջաններ եւ նոյնիսկ պետութիւններ կրում էին իրենց գլխաւոր քաղաքի անունը:
- 2 Ըստ Գր. Ղափանցեանի՝ աստուածաշնչեան, հայերին խորհրդանշող Թոգարամա անունը միջնադարեան հայ գրականութեան մէջ վերափոխուել է որպէս Թորգոմ, որի որդին էր համարոււմ Հայկը: Ըստ հեղինակի՝ հին հայերը ապրում էին Թիլ-Գարիմույում: Քանի որ այդ տարածքը մօտ էր Հայաստանի, դրանով է հեղինակը բացատրում այդ տարածքների հայացումը (Գ.ա. ԺԲ-Ը.) (КАПАНИЦЯН, ГР., *Историко-лингвистические работы. К начальной истории армян. Древняя Малая Азия*, Ереван 1956, 141-142):
- 3 Եզեկիէլ, Իէ, 14; ԼԸ, 6:
- 4 ՄՈՎՍԷՍ ԽՈՐԵՆԱՅԻ, *Հայոց պատմութիւն, Գիրք առաջին: Հայոց մեծերի ծննդաբանութիւնը*: Այն մասին, որ նոյի որդիների ծննդաբանութիւնը հաւասար է գալիս միևնու Արրաեան, Նինոս եւ Արամ, եւ թէ Նինոսը ոչ Բէլմ է, եւ ոչ Բելի որդին, Երեւան 1997, 75-76:

նահապետը կոչւում է «Թորգոմի որդի», իսկ հայ ժողովուրդը՝ «ազգն Թորգոմայ»⁵ :

Թեգարամայի վերաբերեալ առաջին տեղեկութիւնները յայտնուել են Քանէսի (Նեսայի) «կապադովկիական աղիւսակներում» (Ք.ա. ի.-ժ.է.): Քաղաքը առեւտրական կապեր է ունեցել տարածաշրջանի շատ բնակավայրերի հետ: Նրանցից մի քանիսը (օրինակ՝ Abu(x)uhta-ն, Kurušša, Tiburzia) կարելի է տեղորոշել Թեգարամայի մօտ⁶ : Թեգարաման կարեւոր առեւտրական տարանցիկ կենտրոններից մէկն է հանդիսացել տարածաշրջանում: Առեւտրական ճանապարհը, որ սկսւում էր Ալշուրում, անցնում էր Թեգարամայով եւ հասնում Քանէս⁷ : Հաւանաբար քաղաքում կար աշուրական առեւտրական գաղութ (կարում) եւ գաղութի վարչակազմ (bet kârim)⁸ :

Եթէ Քանէսի աղբիւրներում տրուած է, որ Թեգարաման բնակավայր է, ապա խեթական աղբիւրներում այն նշուած է որ-

- 5 Տե՛ս նաև ՅՈՎՀԱՆՆԵՍ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԴՐԱՍԽԱՆԱԿԵՐՏՏԻ, Հայոց պատմութիւն, Երևան 1996, 9, 15, 39, 40: Տուն Թորգոմայի հարցին առաւել մանրամասն եւ հանգամանալի անդրադարձել է ՔՈՍԵԱՆՆ Ա., Տուն Թորգոմայ (առասպել եւ իրականութիւն), Երևան 1998, աշխատութեան մէջ: Ըստ նրա՝ «Տուն Թորգոման» պետք է մուտք գործէր հայոց մատենագրութիւն Աստուածաշնչի միջոցով, իսկ Եփրատից արեւմուտք ընկած տարածքը՝ Մելիդ-Թեգարաման (յետագայի Փոքր Հայք), պետք է կարեւորագոյն դեր խաղար հայկական էթնոսի եւ պետականութեան համախմբման գործում, որպէսզի յետագայում հայոց ինքնագիտակցութեան մէջ արմատաւորուէր նախահայր Թորգոմի եւ նրա յետնորդների մասին վերյուշի տեսնով:
- 6 Ստորեւ ներկայացնում ենք այդ բնակավայրերի ամբողջական ցանկը՝ *Abu[x]hta, Apaludana, Apum, Banišra, Buruddum, Durhumit, Haqa, Harranu, Hattum, Hurama, Hürumhaššum, āl-İşurrātim, Kakaruwa, Kaneš, Kuburnat, Kurušša, Kuššara, Luhuzattiya, Mamma, Nihriya, Pahatima, Purušhaddum, Sukukli, Supana, Šalahšuwa, Šalatuwar, Šamišuna, Talpa, Tiburziya, Timelkiya, Wašhaniya, Wahšušana, Wilušna, Zalpa, Ziluna, Zukua* (BAYRAM, S., *New and Some Rare Geographical Names in the Kültepe Texts*, Archivum Anatolicum, 3, Ankara 1997, 41-66).
- 7 BOBOKHYAN, A., *Kommunikation und Austausch im Hochland zwischen Kaukasus und Taurus*, ca. 2500-1500 v. Chr., BAR International Series 1853, 2008, S. 25, 71.
- 8 Տե՛ս BARJAMOVIC, G., *A Historical Geography of Anatolia in the Old Assyrian Colony Period*, Copenhagen 2011, 122-133, note 376): Տե՛ս նաև BILGIĆ, E., *Die Ortsnamen der "kappadokischen" Urkunden im Rahmen der alten Sprachen Anatoliens*, Archiv für Orientforschung, 15, p. 36.

պէս ե՛լ երկիր, ե՛լ քաղաք: Օրինակ՝ *Խաթթիի արքայ Տելեպինովի* (Ք.ա. 1525-1500) «Հոչակագրում» նշուում է, որ դէպի Հարաւ շարժուող *Խաթթիի արքայ Խանթիլի Ա.-ը* (Ք.ա. մօտ 1590-1560) ճանապարհին կանգ է առնում *Թագարամա քաղաքում*⁹: Նոյն գրութեան մէկ այլ մասում տրուում է, որ *Խանթիլիի օրօք սպանում են Շուկցիյա քաղաքի*¹⁰ *Թագուհուն* եւ նրա երեխաներին: Նշուում է, որ մինչ այդ նրան եւ նրա ընտանիքին տարել էին դէպի *Թագարամա քաղաք*, որի մօտ էլ, հաւանաբար, նրանց սպանել էին¹¹: *Թագարամայի վերաբերեալ տեղեկութիւն կայ նաեւ խեթական սահմանապահ հրամանատարներին տրուած հրահանգների տեքստում*¹² (հաւանաբար, Առնուվանդա Ա.ի ժամանակաշրջանը (Ք.ա. ԺԵ. դարի առաջին կէս)), որտեղ նշուում են զինուորներ - *Կասսիյայից, Խիմուվայից, Թեգարամայից եւ Իսուվայից*¹³:

Խաթթիի արքայ Սուպպիլուլիումա Ա.ի (Ք.ա. 1344-1322)՝ *Միտաննիի արքայազն Շատտիվազայի հետ կնքած պայմանագրի պատմական նախաբանում* գրուում է այն մասին, որ *Սուպպիլուլիումայի հօր՝ Թուդխալիյա Գ.ի օրօք* (Ք.ա. 1360-1344) մի շարք երկրների հետ միասին *Խաթթիին թշնամացել էր նաեւ Թեգարամա երկրի կէսը*: *Խէթերին յաջողում է վերականգնել իրենց իշխանութիւնը Թեգարամայում եւ յարակից տարածքներում, սակայն ըմբոստացած երկրամասերի բնակչութեան մի մասը հեռանում է դէպի Իսուվա*¹⁴: *Խէթերը ներխուժում են նաեւ Իսուվա, յաղթում*

9 HOUT, Th.P.J. van den, *The Proclamation of Telipinu* (1.76), in HALLO, W. – LAWSON YOUNGER, K. (eds.), *The Context of Scripture, Canonical Composition from the Biblical World*, vol. I, Leiden-New York-Köln 1997, 195. HOFFMANN, I., *Der Erlaß Telipinus*, Heidelberg 1984, 20-21.

10 Շուկցիյա քաղաքի տեղադրութեան վերաբերեալ տե՛ս DEL MONTE, G. – TISCHLER, J., *Répertoire Géographique des Textes Cunéiformes, N° VI. Die Orts- und Gewässernamen der hethitischen Texte*, Wiesbaden 1978, (այսուհետ՝ RGTC, VI), 363-364.

11 Այս իրադարձութեան վերաբերեալ տե՛ս նաև HOFFMANN, I., *Der Erlaß Telipinus*, 22-23; HELCK, W., *Die Šukziya-Episode im Dekret des Telipinu*, in *Die Welt des Oriens*, 15 (1984), 103-108; SOYSAL, O., *Noch einmal zur Šukziya-Episode im Erlaß Telipinus*, in *Orientalia*, 59 (1990), 271-279.

12 Keilschrifturkunden aus Boğhazköi (այսուհետ՝ KUB) XIII 2 III.

13 GOETZE, A., *An Old Babylonian Itinerary*, in *Journal of Cuneiform Studies*, 1953, vol. VII, n. 2, 69. HOUWINK TEN CATE, Ph. H.J., *The Records of the Early Hittite Empire (c. 1450-1380 B.C.)*, Istanbul 1970, 67, 70.

14 BECKMAN, G., *Hittite Diplomatic Texts*, Atlanta 1996, 38-39.

բոլոր այդ ուժերին¹⁵ : Սուպպիլուլիումա Ա-ի տարեգրութիւնում նշւում է, որ Խաթթիի արքան դէպի Խուրրի երկիր արշաւելու ճանապարհին կանգ է առնում Թեգարամա երկրում, որտեղ Տալպա քաղաքում զօրքերի զօրատես է անցկացնում : Այնուհետեւ տեղի ունեցած ճակատամարտում խէթերը յաղթանակ են տանում, իսկ թշնամին փախչում է դէպի Թեգարամա երկրի լեռները¹⁶ : Փաստօրէն, Տալպա քաղաքը մտնում էր Թեգարամա երկրի կազմի մէջ : Միաժամանակ, պարզ է դառնում նաեւ, որ Թեգարաման լեռնային երկիր էր¹⁷ :

Սուրսիլի Բ-ի (Ք.ա. 1321-1295) «Ընդարձակ» տարեգրութեան թ. տարում Խաթթիի արքան, գտնուելով Թեգարամա երկրում¹⁸, այստեղ ռազմական խորհուրդ է հրաւիրում եւ որոշում կայացնում ձմեռնամուտի պատճառով եւ իր զօրավարների խորհրդով չարշաւել դէպի Հայասա (Ազգի) յետաձգելով այդ ռազմական գործողութիւնը մինչեւ յաջորդ տարի : Խաթթուսիլի Գ-ի ժամանակաշրջանի (Ք.ա. 1267-1237) գրութիւններից մէկում եւս յիշատակուած է, որ Իսուվան յարձակուել էր Թեգարամա երկրի վրայ¹⁹ :

15 Կուրտալիսսա քաղաքի զօրքերին, Արաւաննա քաղաքի զօրքերին, Ջագիսա երկրին, Կալասա երկրին, Տիւանա երկրին, Խալիւս լեռան երկրին, Կարնա լեռան երկրին, Տուրմիտտա քաղաքի զօրքերին, Ալիսա երկրին, Խուրմա երկրին, Խարանա լեռան երկրին, Թեգարամա երկրի կէսին, Տեպուրգիյա քաղաքի զօրքերին, Խազկա քաղաքի զօրքերին, Արմաստանա քաղաքի զօրքերին :

16 GÜTERBOCK, H.G., *The Deeds of Suppiluliuma as told by his Son, Mursili II*, in *Journal of Cuneiform Studies*, 1956, 10, 93.

17 Նմանապէս նաեւ իթքական տեքստերից մէկում (Keilschrifttexte aus Boghazköi (այսուհետ՝ KBo) 12.140 Rs 8') տրուած են Թեգարամայի լեռները (հաւանաբար՝ Զիգոն Բասիլիկոն լեռները - Անտիտարրոս լեռնաշղթայի արեւելեան ճիւղաւորութիւնը, տե՛ս ԵՐԵՄՅԱՆ, Ս., *Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»ի*, Երեւան 1963, 52):

18 KBo IV 4 III 19-22 (GÖTZE, A., *Die Annalen des Mursiliš, Mitteilungen der Vorderasiatisch-ägyptischen Gesellschaft*, Leipzig 1933, (այսուհետ՝ AM) 124-125). «Տասնամեայ» տարեգրութիւնում տրուած է, որ Խաթթիի արքան գալիս է Կիցցուվատնայից (Փոքր Ասիայի հարաւ-արեւելքում), սակայն չի նշուած թէ ուր է գալիս :

19 Այդտեղ տրուած է նախկինում (Թուրխալիյա Գ-ի օրօք) Խաթթիում տեղի ունեցած իրադարձութիւնների վերաբերեալ տեղեկութիւն (LAROC-

Թեգարաման հանդիսացել է նաև խաթի կարեւոր հոգեւոր կենտրոններից մէկը: Յայտնի է Թեգարամայի Ամպրոպի աստուածը, արական եւ իգական աստուածութիւնները²⁰:

Խեթական տէրութեան անկումից (Ք.ա. 1180ականներից) յետոյ Թեգարամայի վերաբերեալ տեղեկութիւններ կան պահպանուած ասորեստանեան աղբիւրներում, Աստուածաշնչում²¹ եւ հայկական սկզբնաղբիւրներում:

Հետազոտողների մեծ մասը Թեգարաման տեղորոշել են ներկայիս Գիւրուն բնակավայրի տեղում²², կամ Գիւրունից հարաւ՝ Էլբիստանի (Ալբիստանի) հովտում²³:

«Խեթական տէրութեան աշխարհագրութիւնը» աշխատութեան հեղինակները Թեգարաման տեղորոշում են վերին երկրի եւ կումմաննիի միջեւ, ինքեթական Դահարա (Մելաս²⁴ - Ռ.Ղ.) գետի աւազանում²⁵: Ն. Մարտիրոսեանը նոյնպէս անդրադարձել է Թեգարա-

HE, E., *Catalogue des textes hittites*, Paris 1971, 267. Premier Supplement, RHA, 1-972, № 30, (CTH) 88 (KBo VI 28 obv. 12)):

20 KUB VI 45 II 66f. = 46 III 32f.; KBo XII 140 Rs. 8.

21 «14 Թորգոմայ տնից մարդիկ է, որ ձիերով, հեծալներով ու ջորիներով լցրել են քո (Փիւնիկիայի Տիրոս քաղաքը - Ռ.Ղ.) շուկաները» (Եզեկիէլի մարգարէութիւն, Իէ. Ողբ Տիրոսի վրայ): «6 ... Թորգոմայ սոււնը՝ հիւսիսի կողմերից, ու բոլոր նրանց, որ նրա շուրջն են, բազմաթիւ ազգերի էլ՝ քեզ հետ» (Եզեկիէլի մարգարէութիւն, ԼԸ.: Գոգի ու Մագոգի մասին), ի Աստուածաշունչ, Մայր Աթոռ Ս. Էջմիածին 2007, 1316, 1330:

22 Güriün-ը (հայ.՝ Կիրին, Կիրին) բնակավայր է Սեբաստիայի մահանգում: Հայաստանի եւ յարակից շրջանների տեղանունների բառարան, Ա., Երևան 1-986, 924: Այս տեղադրութիւնն առաջին անգամ առաջարկել է է. Ֆորերը (FORRER, E., *Die Provinzeinteilung des assyrischen Reiches*, Leipzig 1920, 75): Տե՛ս նաև SANDALGIAN, J., *Thogarma, maison de Thogarma, Pays thogarmien*, in *Histoire documentaire de l'Arménie des ages du paganisme (1410 av. - 305 apr. J.-C.)*, Rome 1917, 110-120. ՔԱՍՈՒՆԻ, է., *Նախահայկական Հայաստան*, Պէյրուք 1950, 79-80: ԱՂՈՆՑ, Ն., *Հայաստանի պատմութիւն*, Երևան 1972, 41-42, 310: MAXWELL-HYSLOP, K.R., *Assyrian Sources of Iron. A Preliminary Survey of the Historical and Geographical Evidence*, XXXVI, Iraq 1974, 150.

23 Ալբիստանի վերաբերեալ տե՛ս Հայաստանի եւ յարակից շրջանների տեղանունների բառարան, 6շ. աշխ., 71:

24 Մելաս գետի վերաբերեալ տե՛ս ԵՐՄԵԱՆ, Ս., *Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»ի*, Երևան 1963, 66, 100:

25 GARSTANG, J. - GURNEY, O.R., *The Geography of the Hittite Empire*, London 1959, 46-48 (տե՛ս նաև X էջի քարտեզը, Դահարա գետի վերաբերեալ ինչպէս նաև 31, 34, 42, 46):

մայի տեղորոշմանը: Ըստ նրա՝ Թագարամա երկիրը գտնւում էր յետագայի Դերսիմի շրջանում եւ սահմանակից էր Իսուվային, Կասկային, Մելիդիին²⁶: Գր. Ղափանցեանը տալիս է, որ Թեգարաման գտնւում էր Դիւրիգի եւ Մելիդի միջեւ²⁷: Յ. Տաշեանը Թեգարաման տեղորոշում է Կարգամիսից հիւսիս՝ Սամոսատից մինչեւ Մելիդ: Ըստ նրա՝ Թեգարաման սկզբնապէս իր մէջ էր ներառում *Kumtush* (= Կոմագենէ), *Melite* եւ *Til-Garimmu* երկրները. աւելի ուշ այդ երկրները առանձնացան Թեգարամա երկրից²⁸: Յ. Կոռնելիոսն իր աշխատութեան մէջ համամիտ չէ ներկայիս Գիւրունի տեղում Թեգարամայի տեղորոշման հետ: Նա աւելի հաւանական է համարում, որ այն գտնւում էր յետագայի Կատաոնիայի տարածքում²⁹: Ի. Դեակոնովը Թեգարաման տեղորոշել է Թոխմայսու (*Մելաս - Ռ.Ղ.*) գետի հովտում, ժամանակակից Գիւրունի մօտ, Եփրատից արեւելք³⁰: Նա հաւանական էր համարում, որ Թիլ-Գարիմուս անունը կապ ունէր խեթական Թալիգարիմու կամ Թարիգարիմու տեղանուն հետ³¹: Ս. Երեմեանը նոյնպէս համամիտ է, որ խեթական արձանագրութիւնների Թեգարամա քաղաքը համապատասխանում է ասսուրա-բաբելական աղբիւրների Թիլ-Գարիմուսին (անտիկ աղբիւրների *Gaurenae*, ներկ. Գիւրուն) եւ հանդիսանում էր այդ երկրամասի կենտրոնը: Նա երկրամասի մէջ է տեղորոշել նաեւ Պախսուվա (ըստ հեղինակի՝ ներկ. Արաբկիր քաղաքի շրջանը) եւ Թեբուրգիա (Եփրատի աջ ափին) երկրները: Այդ երկրների միջոցով Թեգարամաման Եփրատով սահմանակից

26 ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ, Ն., *Խայացիներու կանխագոյն պատմութեան ուրուագիծը տեղագրական ծանօթութիւններով, Խարրերդ եւ անոր ոսկեղէն դաշտը*, ՎԱՀԷ ՀԱՅԿ, (աշխ. եւ կազմեց), Նիւ Եորք 1959, 114, 118, 145: Նոյն, *Պրպտումներ փոքրասիական անուններու մասին*, ՊԲՀ, 1961, 3-4, 102:

27 КАПАНИЦЯНЪ ГР., *Историко-лингвистические работы*, 134.

28 ՏԱՇԵԱՆ, Կ. Յ., *Հաթեր եւ Ուրարտեանք*, Վիեննա 1934, 35-36:

29 CORNELIUS, F., *Neue Arbeiten zur hethitischen Geographie*, *Anatolica*, I, 1967, 74.

30 ДЬЯКОНОВ, И., *Предыстория Армянского народа. История Армянского нагорья с 1500 по г. до н.э. хурриты, лувийцы, протоармяне*, Ереван 1968, 84, 93, 180, 229.

31 Սակայն Թարիգարիմուս Մուրսիլի Բ-ի տարեգրութիւնում յիշատակուել է որպէս լեռնանուն Կասկա երկրում (Արեւելապոնոսական լեռների շրջան): Առաւել եւս, որ նոյն տարեգրութիւնում առանձին տրուած է նաեւ Թեգարամա երկիրը (տե՛ս KBo III 4 III 58; KBo IV 4 III 19-21; AM, 80-81, 124-125):

էր Իսուվային³²: Վ. Խաչատրեանը գտնում է, որ Թեգարաման հարաւում սահմանակցել է Խուրի երկրին, իսկ արեւելքում՝ Իսուվային: Նա ենթադրել է, որ Թեգարաման գտնուել է Կիցովատնայի եւ Սամուխայի միջեւ, որ Խարանա լեռները զբաղեցրել են Թեգարամայի կէսը³³: Մ. Աստուրն ընդհանուր առմամբ համաձայն լինելով Թեգարաման Գիւրուն բնակավայրի մօտ տեղադրելու մտքի հետ, չի բացառում նաեւ, որ այն կարող էր գտնուել Մելիդին առաւել մօտ՝ ներկայիս Akçadağ (նախկին Արգառուս կամ Արկա բնակավայրի տեղում)³⁴: Զ. Միլլերը գտնում է, որ Գիւրունի տեղում Թեգարամայի տեղադրութիւնը յստակ չէ, եւ այն կարող է տեղադրուել նաեւ Մալաթիայից արեւմուտք մէկ այլ վայրում նոյնպէս³⁵: Ն. Յարութիւնեանը նոյնպէս համարում է, որ Թեգարաման (Թիլ-Գարիմուն) գտնուել է Մելիդից հիւսիս-արեւմուտք՝ ժամանակակից Գիւրուն բնակավայրի տեղում: Համաձայն Ասորեստանի արքայ Սարգօն Բ-ի (Ք.ա. 721-705) ժ. տարուայ տարեգրութեան՝ Թիլ-Գարիմուն եւ Մելիդուն հանդիսացել են կամմանու երկրի քաղաքներ³⁶: Իսկ համաձայն Սինախերիբի (Ք.ա. 705-681) հատուածական մի արձանագրութեան՝ Թիլ-Գարիմուն գտնուել է Թաբալում³⁷: Ըստ Ա.

32 ԵՐԵՄԵԱՆ, Ս., *Հայ ժողովրդի կազմաւորման ընթացքը*, ՊԲՀ, 1970, 2, 35:

33 ХАЧАТРЯН, В., *Восточные провинции Хеттской империи*, Ереван 1971, 94-96. Սակայն տեքստից այդ չի թիտւմ, այլ այն, որ դրանք (Խարանա լեռները եւ Թեգարաման) պարզապէս հարեւան տարածքներ են եղել (տե՛ս КВо I 1 Vs. 12,21; КВо I 2 I 2'; BECKMAN, G., *Hittite Diplomatic Texts*, 39):

34 ASTOUR, M., *The arena of Tiglath-Pileser III's campaign against Sarduri II (743 B.C.)*, in *Assur*, II, 1979, 5. Արգառուսի վերաբերեալ տե՛ս ԵՐԵՄԵԱՆ, Ս., *Հաստանի եւ յարակից շրջանների տեղանունների բառարան*, Ա., նշ. աշխ., 404:

35 MILLER, J., *Anum-Hirbi and His Kingdom*, in *Altorientalische Forschungen*, 28 (2001), 69, n. 9.

36 АРУТЮНЯН, Н., *Топонимика Урарту*, Ереван 1985, 184. Նոյն, *Корпус урартских клинообразных надписей*, Ереван 2001, 514-515. Սարգօն Բ-ի տարեգրութեան մէջ Մելիդուն համարում է կամմանու երկրի արքայական կենտրոնը, որի կազմում էր նաեւ Թիլ-Գարիմուն:

37 Թաբալը գտնուել է փոքր Ասիայի հարաւ-արեւելեան մասում: Թաբալի պատմութեան վերաբերեալ տե՛ս ARO, S., *Tabal: Zur Geschichte und materiellen Kultur des zentralanatolischen Hochplateaus von 1200 bis 600 v. Chr. Ph.D. dissertation*, Helsinki 1998.

Ղարազեօզեանի՝ Թեգարաման գտնուում էր Մելիդի եւ Իստիտինայի միջեւ, Մելիդը եւ Թեգարաման եղել են հարեւան երկրներ, եւ Մելիդն ընդգրկուած է եղել Թեգարամա քաղաք-պետութեան կազմի մէջ: Ըստ հեղինակի՝ Թեգարաման գտնուում էր Վերին Եփրատի աջակողմեան վտակ Կարամինոնի գետաբերանի շրջանում՝ Եփրատի աջ ափով ձգուող եւ Սեբաստիայից Խարրանա երկրով, Կարամինոն գետի հովտով անցնող ճանապարհների հանգուցակէտում: Ըստ Ա. Ղարազեօզեանի՝ Թեգարամա կամ - Թոգարմա տեղանունան երկրորդ մասի արամա-արմա տարբերակները նոյն արմատի տարբեր դրսեւորումներն են: Նրանց մէջ կարելի է տեսնել Արամ անունը: Այսինքն՝ տեղանունան նախնական ձեւն է *Թեգ/Թոգ (սերմ, զարմ, տոհմ. այն մատնանշել է նաեւ բնակութեան շրջան՝ տուն կամ երկիր) Արամայ: Հետեւաբար, տեղանունը նշանակել է Արամի տուն կամ Արամի երկիր³⁸:

Ա. Քոսեանը Թեգարամային, Մելիդին նուերուած իր ուսումնասիրութիւններում նշել է, որ խեթական ժամանակաշրջանում Մելիդ երկրի տարածքի մեծ մասը մտնում էր Թեգարամա երկրի կազմի մէջ: Արեւելքում այն սահմանակից էր Իսուվային³⁹: Այս տարածքում էր գտնուում նաեւ խեթական մշակութային եւ պաշտամունքային կարեւորագոյն կենտրոններից մէկը՝ Լա(խու)վացանտիյեան⁴⁰: Նա նշում է, որ Խաթթիի տրոհումից յետոյ էլբիստան-Գիւրուն հատուածը նոյնպէս կազմել է յետխեթական շրջանի լուվիական պետականութեան ծաւալման մի հատուածը: Ա. Քոսեանը յիշատակում է նաեւ Karahöyük, 1-3 գրութիւնը, որտեղ նշուել է Lál/i-u-ka+ra/i-ma քաղաքը, որ խեթական աղբիւրների Թա/եգարաման է՝ (ժամանակակից Գիւրուն)⁴¹: Ըստ նրա՝ Խաթթիի տրոհման շրջանում այստեղ հնագիտորէն աւերածութիւններ վկայուած չեն: Հիւսիս-բալկանեան ժողովուրդների տեղաշարժերը չեն

38 ՂԱՐԱԳԵՕԶԵԱՆ, Ա., Թեգարամա (Թոգարմա) քաղաքի տեղորոշման հարցի շուրջ, ԻՂՐաքեր հասարակական գիտութիւնների (այսուհետ՝ ԼՀԳ), 2011, 4, 3-11:

39 ՔՈՍԵԱՆ, Ա., Ուշխեթական Մելիդ պետութիւնը (ըստ հիերոգլիֆային լուվիերէն աղբիւրների), ԼՀԳ, 1984, 6, 62: Նոյն, Лувийские царства Малой Азии и прилегающих областей в XII-VIII вв. до н.э. (по иероглифическим лувийским источникам), Ереван 1994, 17.

40 RGTC, VI, 237-238.

41 ՔՈՍԵԱՆ, Ա., Մ.թ.ա. ԺԲ. դ. մերձաւորարեւելեան սցենարներ եւ Հայկական լեռնաշխարհը, Երևան 1999, 149-150:

ընդգրկել այս շրջանը. նոյնը վերաբերում է նաև ասորեստանեան աղբիւրների յիշատակած մուշկերի, ուրումէացիների եւ կասկերի տեղաշարժերին⁴²:

Այսպէս, համադրելով «կապադովկիական», խեթական եւ ասորեստանեան աղբիւրները՝ Թեգարաման կարելի է տեղորոշել - վերին Եփրատի հովտում, գետի աջ ափին, Կարգամիսից (ներկայիս Ջերաբլուս հնավայրի տեղում) հիւսիս, Իսուվայից (հայկական Ծոփք) արեւմուտք, վերին երկրից հարաւ եւ Քանէսից արեւելք⁴³: Հարկ է նշել, որ մասնագէտների մեծ մասը համակարծիք են Թեգարաման Մելիտենէի արեւմուտքում (արդի Գիւրունի տեղում) տեղադրելու, որի հետ մենք նոյնպէս համամիտ ենք: Թեգարամա երկիրը, փաստօրէն, տեղադրում է յետագայի Երկրորդ Հայքի տարածքում⁴⁴:

Յետագայում Թեգարամա երկրի տարածքի մեծ մասում առաջացաւ Մելիդի (Միլիդիայի, Մելիտեայի, Մալիցիայի) Թագաւորութիւնը (այսպէս կոչուած՝ նորխեթական պետութիւններից մէկը⁴⁵), որի քաղաքներից մէկն էր Թիլ-Գարիմմուն⁴⁶: Համաձայն

42 ՔՈՍԵԱՆ, Ա., *Հուլիական պետութիւնները: Հայաստանի յարակից երկրների պատմութիւն*, Ա., Երևան 2013, 205:

43 RGTC, VI, 383-384.

44 Երկրորդ Հայքի մասին տե՛ս ԵՐԵՄԵԱՆ, Ս., *Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»ի*, մշ. աշխտ., 100: Բիւզանդիայի կայսր Յուստինիանոսի (527-565) քրեփոխումների համաձայն՝ նախկին Երկրորդ Հայքը վերանուանուեց Երրորդ Հայք: Թեգարամայի տարածքը համընկնում էր յետագայի Երրորդ Հայքի տարածքին: Այստեղ յիշատակուել են Մելիտենէ, Արկա, Արաբիսոն, Արիարաթիա, միւս կումանա եւ կուկիսոն քաղաքները: Տե՛ս Ա.ԴՈՆՑ, Ն., *Հայաստանը Յուստինիանոսի դարաշրջանում: Քաղաքական կացութիւնը ըստ նախարարական կարգերի*, Երևան 1987, 191-192, 198: Տե՛ս նաև Հայ ժողովրդի պատմութեան *Բրեստումատիա*, Ա., Երևան 2007, 200-201:

45 BRYCE, T., *The World of the Neo-Hittite Kingdoms*, Oxford 2012, 98-110.

46 Տե՛ս նաև ՍԱՐԳՍԵԱՆ, Գ., *Մովսէս Խորենացու «Հայոց պատմութիւնը» եւ սեպագրական աղբիւրները (Հայկի եւ Հայկեանների առասպելի պատմականութեան եւ գարգացման փուլերի խնդիրը)*, Ի ՊՔՀ, 1992, 2-3, 37, 45-48: Հեղինակը նշում է, որ Հայկի հայր համարուող Թորգոմի բնակուելու վայրն, ըստ Աստուածաշնչի տուեալների, եղած պիտի լինի իր իսկ անունը կրող «Տուն Թորգոմայ» երկիրը, որ գտնուել է «ի ծագացն հիւսիսոյ» եւ ոչ թէ հարաւում, ինչպէս Բարեղունը: Հայկի հայրենիքն էլ, ուրեմն, ըստ այնմ, եղած պիտի լինի «Տուն Թորգոմայ» երկիրը: «Տուն Թորգոմայ» աստուածաշնչական արտայայտութիւն է. երբայքեմնում՝ Beth Thogarma, յունարէմում՝ Οἶχος

Եզեկիէլ մարգարէի վկայութեան՝ Թեզարամա անուան աստուածաշնչեան տարբերակ հանդիսացող «Տուն Թորգոմա»ն տեղադրուում է Գամեր (Գամիրք-Կապադոկիա) երկրի մօտ⁴⁷, որ նոյնպէս գալիս է հաստատելու վերոյիշեալ տեղադրութեան իսկութիւնը: Հաւանաբար, Թեզարամա երկրի կազմի մէջ են մտել նաեւ Լախովացանտիյա, Տալպա քաղաքները:

Թեզարամայի տարածքը հեռու չէր Նեսայից՝ խէթերի նախնական կենտրոններից մէկից, եւ այն նոյնպէս հանդիսացել է խէթերի բնակութեան նախնական վայրերից մէկը: Հաւանաբար, արդէն Խաթթուսիի Ա.ի օրօք (Ք.ա. ժ.է. դարի Բ. կէս) Թեզարամայի տարածքը գտնուում էր Խեթական պետութեան կազմի մէջ, որպէսզի ապահովէր Խաթթիի արքայի թիկունքը, երբ նա արշաւում էր դէպի Հիւսիսային Սիրիա: Ամենայն հաւանականութեամբ, այդ ժամանակաշրջանից էլ այն-մտնում էր խեթական տէրութեան կազմում, մինչեւ նրա անկումը: Թեզարաման նաեւ ռազմավարական կարեւոր դիրք էր զբաղեցնում: Մի կողմից այն սահմանակ-

тот Ооргамá (կամ Өεργамá), որ նշանակում է ոչ թէ պարգապէս «Թորգոմի տուն», այլ «Թորգոմի տուն» անունը կրող երկիրը: Ըստ հեղինակի՝ Մովսէս Խորենացու մօտ ազգային հնագոյն առասպել-աւանդութեան կորսուած մասից մի նմոյշ կամ վերյուշ է պահպանուել, որ յուշում է, թէ այդ մասում խօսուած պիտի լինէր Հայկի ու նրա որդիների ոչ թէ Բաբելոնից, այլ Հայկի բուն հայրենիքից՝ «Տուն Թորգոմայ»ից մինչեւ Հարֆ կտրած Գանապարհի մասին: Այսպէս, Թորգոմի, որպէս հայերի նախաօր, գաղափարը, յամենայն դէպս, աւելի վաղ է վկայուած, քան իրականացուել է Աստուածաշնչի հայերէն թարգմանութիւնը: Այն առկայ է արդէն Դ. դարի հեղինակ Եւսեբիոս Կեսարացու «Քրոնիկոնում» (ԵԻՍԵՐԻ ՊԱՄՓԻԼԵԱՅ ԿԵՍԱՐԱՑԻՈՅ, Ժամանակականք, մասն Բ., Վենետիկ 1818, 12): Այսինքն՝ Թորգոմի՝ հայոց նախահայր լինելու գաղափարը Ե. դարի հայ մատենագրութեան մէջ ծագած մի գաղափար չէ՝ յղացած սոսկ Աստուածաշնչի թարգմանութեան ներքոյ, այլ գոյութիւն է ունեցել արդէն աւելի վաղ, նախագրական շրջանում: Իսկ այն հանգամանքը, որ Թորգոմի-տուն-Թիլ-Գարիմնու-Թեզարամա երկիրը գրտնուել է «հայ» ցեղանուն, ուրեմն եւ «Հայկ» անձնանուն հետ կապուած Հայասա երկրի մերձաւոր հարեւանութեամբ, հիմք կարող է ծառայել Թորգոմ-Հայկ եւ Թեզարամա-Հայասա գոյգերի առկայութիւնից բխող նոր եզրակացութիւնների համար: Տե՛ս նաեւ ՊԵՏՐՈՍԵԱՆ, Ա., Հայոց ազգածագման հարցեր, Երեւան 2006, 79:

47 ԱՏՈՒԱԾԱՇՈՒԽՆՁ, Եզեկիէլ, ԼԸ, 5-6: Մարգարէութիւն Գոգի դէմ: Գոգի եւ Մագոգի մասին: Գոմերին ու բոլոր նրանց, որ նրա շուրջն են, Թորգոմայ տունը՝ հիւսիսի կողմերից, ու բոլոր նրանց, որ նրա շուրջն են, քաղմաթիւ ազգերի էլ՝ քեզ հետ:

ցում էր Խուրի-Միտաննի պետութեանը, միև կողմից՝ Իսուվա երկրին: Այսպէս, Թեգարամա երկիրը կարեւոր աշխարհագրական դիրք էր զբաղեցնում. մի կողմից այստեղից ճանապարհներ էին բացւում դէպի Հայկական լեռնաշխարհի արեւմտեան այլ շրջաններ, դէպի Մոփք, միև կողմից՝ դէպի Հիւսիսային Ասորիք եւ Հիւսիսային Միջագետք: Բացի այդ, Թեգարաման, կարծես, Խաթթիի ռազմական կենտրոններից մէկն էր, որտեղ Խաթթիի արքաները զօրատես էին անցկացնում խոշոր ռազմական միջոցառումներից առաջ: Այն հանդիսացել է նաեւ Խաթթիի կարեւոր հոգեւոր կենտրոններից մէկը:

ՌՈՒԲԵՐՏ ՂԱԶԱՐԵԱՆ

Summary

THE HITTITE CITY-STATE OF TEGARAMA

ROBERT GHAZARYAN

Tegarama was one of the eastern cities of the Hittite kingdom. In the geographic sense it fell within the Armenian Highland, which is why its history is of special interest to us. Taking into account the fact that the Armenian people had considerable ethnic ties with the upper Euphrates region, specialists have traditionally tended to identify “The House of Torgom” in the trans-Euphrates region together with the city Tegarama (Assyrian Til-Garimmu) mentioned from the 2nd millennium BC. “The House of Torgom” is a literal translation of “Bet-Togarma” mentioned in the Bible. The study of the history of Tegarama is also important because in Armenian historiography, starting from Movses Khorenatsi, the Armenian progenitor Hayk is called “Son of Torgom”, and the Armenian people are referred to as “the People of Torgom”.

Most researchers have placed Tegarama in or near the present town of Gürün. By comparing Cappadocian, Hittite, and Assyrian sources, Tegarama can be located in the upper Euphrates valley, on the right bank of the river, to the north of Kargamis, to the west of Isuwa, to the south of the Upper Land, and to the east of Kanes.

The territory of Tegarama was not far from Nesa - one of the first Hittite centers - and it was also one of the initial places of Hittite settlement. Tegarama also occupied a strategically important position: on the one hand it bordered on the country of Miṭanni, on the other hand Isuwa. Thus, the region of Tegarama occupied a significant geographic position. Roads led from here to other western regions of the Armenian Highland, to Tsopk (Sophene), as well as to northern Syria and northern Mesopotamia. It was also one of the spiritual centers of Hatti.